

## ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Սեդա Ստեփանյան

*ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ*

Հանցագործությունները բացահայտելու, ապացույցներ հավաքելու և հանցագործին հայտնաբերելու դժվարությունները կարող են հաղթահարվել տուժողների և վկաների կողմից քրեական դատավարության գործընթացին նպաստելու մոտիվացիան բարձրացնելու շնորհիվ: Քաղաքացիների նման աջակցությունը կարող է իրականացվել միայն քրեական դատավարությանը մասնակցելու անվտանգության երաշխիքներով և դրանք ապահովելու պետության պարտականությունների կատարմամբ:

Քրեական դատավարության մասնակիցների, հատկապես վկաների և տուժողների պետական պաշտպանությունը, որը նպաստում է արդարադատության իրականացմանը, ժամանակակից քրեական դատավարության գիտության համեմատաբար նոր և դեռևս ոչ լիովին զարգացած ոլորտներից է<sup>1</sup>:

Հանցավորության դեմ պայքարի արդյունավետ մեխանիզմների ստեղծումը ներկայումս պահանջում է արդարադատությանը աջակցող անձանց պետական պաշտպանության քրեադատավարական և այլ իրավական գործող միջոցների կատարելագործմանը ուղղված նոր գիտական հետազոտություններ: Անհրաժեշտ է արդյունավետ հավասարակշռության պահպանում հանցավորության դեմ պետության պայքարի և քրեական դատավարության ընթացում անձի օրինական շահերի պաշտպանության, այսինքն՝ հանրային և մասնավոր շահերի միջև:

Մինչև վերջերս հանցագործությունից տուժած անձանց պաշտպանության խնդիրը բավականին թերի էր կարգավորված ինչպես հետխորհրդային, այնպես էլ արևմտյան երկրներում: Պատճառն այն է, որ արևմտյան դատավարագետներից շատերը քրեական վարույթը հիմնականում դիտարկում էին որպես երկու հակադիր շահերի պայքար՝ մի կողմից հանցագործին հետապնդող պետության, մյուս կողմից՝ հետապնդվողի (կասկածյալի, մեղադրյալի կամ ամբաստանյալի): Հետապնդում իրականացնող պետությունն իր շահերը տեսնում է քրեական իրավունքի նյութական նորմերը կիրառելու և մեղավոր անձանց անպատիժ չթողնելու մեջ: Մինևույն ժամանակ պետությունը պետք է պահպանի օրենսդրական մակարդակում մեղադրյալի նկատմամբ անարդար դատական պրակտիկա թույլ չտալու վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) չափանիշները: Հետապնդվողը, իր հերթին, հակառակը, պաշտպանում է իր շահերն ու ազատությունները, այսինքն՝ փորձում է հնարավորին չափ նվազեցնել ներխուժումը իր անձնական ազատության, գույքի, բնակարանի, գաղտնի նամակագրության և այլ ոլորտներ<sup>2</sup>: Այսպիսով,

<sup>1</sup> St`u **Зайцев Е.О.** Государственная защита анонимного свидетеля в сфере уголовного судопроизводства Российской Федерации и зарубежных стран: сравнительно-правовое исследование // автореф. дис. к.ю.н. Москва, 2016, стр. 13.

<sup>2</sup> St`u **Alexander Yu. Epikhin, Oleg A. Zaytsev, Anshchrey V. Mishin, Timur R. Mukhametshin,** Safety of participants of criminal trial and ensuring balance of interests of charge and protection, Revista San Gregorio, 2018, No.25, special edition November(94-99), ISSN: 1390-7247; eISSN: 2528-7907 pp. 95-99

քրեադատավարական ամբողջ գործընթացը առաջին հերթին դիտարկվում է որպես դիմակայություն պետության և հանցագործի միջև, իսկ տուժողի և հատկապես դատավարության մյուս մասնակիցների շահերը մշտապես երկրորդական էին: Արդյունքում տուժողը ինչպես օրենսդրի, այնպես էլ իրավապահ մարմինների կողմից ընկալվել է առաջին հերթին որպես տեղեկատվության աղբյուր, և նրա իրավունքները, այդ թվում՝ քրեական վարույթին մասնակցության անվտանգության իրավունքը, պատշաճ ապահովված չեն եղել: Տուժողի (վկայի և քրեական գործի մյուս մասնակիցների) իրավապահ մարմինների հետ հարաբերությունների ոչ բարենպաստ փորձն էլ հաճախ հանգեցրել է այնպիսի իրական վտանգի, որ տուժողներից ոմանք վախենում էին հաղորդումներ ներկայացնել: Այդ պատճառով էլ ավելացավ թաքնված և չպատճված (լատենտ) հանցագործությունների քանակը:

Քրեական դատավարության մասնակիցների պաշտպանության ինստիտուտը վաղուց է միջազգայնացվել: Դրա իրականացման խնդիրները տարբեր պետությունների ազգային իրավական համակարգերի մակարդակում հաճախ պայմանավորված են տարբեր կոնվենցիոն դրույթներին դրանց անհամապատասխանությամբ: Խնդրի իրավական լուծումը գտնելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել միջազգային փաստաթղթերը: Դրանց մեծ մասը ևս առավել մանրամասն անդրադառնում է մեղադրվող անձի իրավունքներին:

Բոլոր միջազգային փաստաթղթերում առաջնահերթ է համարվում այն սկզբունքը, որ քրեական դատավարության բոլոր մասնակիցները պետք է օժտված լինեն ինչպես բավարար իրավունքներով, այնպես էլ դրանք իրացնելու երաշխիքներով, որպեսզի և՛ նախաքննությունը, և՛ ամբողջ քրեական դատավարությունը հնարավոր լինի համարել մարդասիրության ու ժողովրդավարության պահանջներին համապատասխանող: Ընդ որում ոչ մի դեպքում չի կարելի մոռանալ հանցագործություններից տուժածների իրավունքների ու օրինական շահերի մասին: Դրան, մասնավորապես, ուշադրություն է դարձվում քրեական իրավունքի և դատավարության շրջանակներում տուժողի վիճակի մասին Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 1985 թվականի հունիսի 28-ին ընդունված Հանձնարարականում (№ R (85) 11)<sup>1</sup>, որում անդամ պետությունների կառավարությունների ուշադրությունն է հրավիրվում այն բանին, որ քրեական արդարադատության հիմնական գործառույթը պետք է լինեն հարցումների բավարարումն ու տուժողների շահերի պաշտպանությունը<sup>2</sup>:

Մարդու իրավունքների վերաբերյալ ամենակարևոր փաստաթղթերից մեկում՝ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի՝ 1948 թվականին ընդունած Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, հանցագործությունից տուժած անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ առանձին դրույթ ևս նախատեսված չէ: Մինևույն ժամանակ, հռչակագրի 8-րդ հոդվածում սահմանված է ընդհանուր սկզբունք՝ համաձայն որի. «Յուրաքանչյուր ոք սահմանադրությամբ և օրենքով իրեն տրված հիմնական իրավունքների խախտման դեպքում ունի ազգային իրավասու դատական ատյանների միջոցով արդյունավետ պաշտպանության իրավունք»: Այս դրույթը վերաբերելի է նաև հանցագործությունից տուժած անձանց, քանի որ տուժողները ևս ունեն ազգային իրավասու մարմիններում պաշտպանության, այդ թվում վնասի փոխհատուցման իրավունք:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան 1985 թվականի նոյեմբերի 29-ին 40/34 բանաձևով ընդունեց «Հանցագործությունների և իշխանության

<sup>1</sup> Ст'а Сборник документов Совета Европы в области защиты прав человека и борьбы с преступностью. М.: Спарк, 1998, էջ 114-116:

<sup>2</sup> Ст'а Անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության ապահովումը Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության մինչդատական վարույթում, ԵՊՀ հրատարակչություն, Երևան, 2011, էջ 204-205:

չարաշահման զոհերի համար արդարադատության հիմնական սկզբունքների հռչակագիրը»: Այս փաստաթղթում առաջին անգամ ՄԱԿ-ը սահմանեց հանցագործությունից տուժած անձանց բնորոշումը, նրանց շրջանակը և իրավունքները: Հռչակագիրը ՄԱԿ-ի անդամ երկրներին կոչ է անում հանցագործությունից տուժած անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու համար ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ<sup>1</sup>:

Հանցագործությունից տուժած անձանց իրավունքների և օրինական շահերի անմիջական պաշտպանությանն է ուղղված 1983 թվականի նոյեմբերի 24-ին Եվրոպայի Խորհրդի ընդունած «Բռնությամբ հանցագործությունների զոհերին վնասի հատուցման մասին կոնվենցիան»<sup>2</sup>:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը այս հարցի վերաբերյալ ընդունել է մի շարք որոշումներ՝ փորձելով հավասարակշռել հանրային և մասնավոր շահերը: ՄԻԵԴ-ի վճիռների համար հիմք է Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիան: Եվրոպական դատարանի առանձին որոշումներում վերլուծվում է վկային հարցաքննելու պաշտպանության կողմի իրավունքի ապահովման և այն անձի շահերի հավասարակշռության հարցը, որի կյանքը կարող է վտանգված լինել: Դորսոնն ընդդեմ Նիդերլանդների<sup>3</sup> գործով դատավճիռի համաձայն. «6-րդ հոդվածը չի պահանջում առանձնահատուկ հաշվի առնել վկաների շահերը: Այնուամենայնիվ, երբ վտանգված են կյանքը, ազատությունը կամ մարդու անվտանգությունը, ապա այդ հարցը ընկնում է ընդհանուր կանոնի ներքո Կոնվենցիայի 8-րդ հոդվածի շրջանակում»<sup>4</sup>: Սույն իրավական դրույթը պարունակում է հետևյալ առանցքային կետերը. եթե կա սպառնալիք անձի կյանքին (ազատությանը կամ անվտանգությանը), ապա ապացույցների հետազոտման ժամանակ պաշտպանության կողմի շահերը կարող են սահմանափակվել (այդ անձին հարցեր ուղղելը և այլն): Ինչպես տեսնում ենք, այս իրավիճակում հանրային և մասնավոր շահերի հարաբերակցության մեջ նախապատվությունը տրվում է անձի անվտանգությանը, ում կարող է վտանգ սպառնալ: Իսկ ՄԻԵԴ-ի մեկ այլ որոշման մեջ նշվում է, որ դատարանի որոշումը չի կարող հիմնվել բացառապես անանուն վկայի ցուցմունքի վրա, հակառակ դեպքում խախտվում է պաշտպանության իրավունքը<sup>5</sup>: Նման իրավական մոտեցումն ունի իր հիմնավորումը. մեղադրանքը նախ պետք է հիմնված լինի բավարար ապացուցողական բազայի վրա: Եթե մեղադրանքի կողմը, բացի անանուն վկայի ցուցմունքից, այլ ապացույց չունի, դատարանն իրավունք չունի անձին մեղավոր ճանաչելու: Վկաների դասակարգման համար բավարար հիմքերի առկայությունը նշվել է ՄԻԵԴ-ի 1997 թվականի ապրիլի 23-ի «Վան Մեխելենը և այլք ընդդեմ Նիդերլանդների» որոշման մեջ<sup>6</sup>: Դատարանի պարտականությունը՝ մանրամասնորեն որոշել վկաների անանունությունը պահ-

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>2</sup> Տե՛ս Сборник документов Совета Европы в области защиты прав человека и борьбы с преступностью. М.: Спарк, 1998, стр. 81-85:

<sup>3</sup> Տե՛ս Judgment of the European Court of 26 March 1996 on the merits of the application N 20524/92 Doorson v. the Netherlands. § 70.

<sup>4</sup> Տե՛ս **Epikhin, A.Y.** et al. Problem of Definition of Personal Security in the Modern Russian Criminal Procedure. Journal of Advanced Research in Law and Economics, [S.I.], v. 7, n. 6 Feb. 2017, pp. 1539-1545.

**Epikhin, A.Y.** et al. Protection of the Witnesses and Victims: International Legal Acts, Legislation of some States and the Modern Russian Legislation. Journal of Advanced Research in Law and Economics, [S.I.], v. 7 May 2016., n. 2, pp. 313-322.

<sup>5</sup> Տե՛ս Judgment of the European Court of 28 March 2002 on the merits of the applications N 47698/99 and 48115/99 Birutis and Others v. Lithuania, § 34, 35.

<sup>6</sup> Տե՛ս ECHR Decision dated 23.04.1997 "Van Mechelen and Others v. the Netherlands" (Claim No. 21363/93, 21364/93, 21427/93 and 22056/93) [Rus. (extract), Eng.] // European Court of Human Rights. Selected Decisions. V. 2. - M.: Norma, 2000. pp. 440 - 454.

պանելու պատճառները դատական նիստում, մանրամասնած է ՄԻԵԴ-ի 2006 թվականի՝ Կրասնիկինն ընդդեմ Չեխական հանրապետության գործում<sup>1</sup>: ՄԻԵԴ-ն ընդունում է դատարանի պարտականությունը՝ ստուգել անանուն վկաներից ցուցմունք ստանալու ընթացակարգն ու պայմանները: Այսպիսով, ՄԻԵԴ-ի կարծիքով՝ դատական նիստում անանուն վկաների ցուցմունքների ստացման ընթացակարգի և պայմանների ստուգման բացակայությունը հանգեցնում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման<sup>2</sup>:

Հետխորհրդային երկրներում վկաների, տուժողների և քրեական դատավարության այլ մասնակիցների պաշտպանության խնդրի ժամանակակից ձևակերպումը, որպես կանոն, կապվում է 20-րդ դարի 90-ական թվականների սկզբի դատավարական բարեփոխումների գործընթացի հետ: Հենց այդ ժամանակ ԽՍՀՄ և առանձին միութենական հանրապետությունների քրեական դատավարության օրենսգրքերը լրացվեցին 271-րդ հոդվածով, որի համաձայն. «Եթե կան բավարար ապացույցներ, որ տուժողին, վկային կամ գործին մասնակցող այլ անձանց, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներին կամ մերձավոր ազգականներին սպառնում են սպանությամբ, բռնության գործադրմամբ, զույքի ոչնչացմամբ, վնասմամբ կամ այլ ապօրինի գործողություններով, հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը պարտավոր են օրենքով նախատեսված միջոցներ ձեռնարկել... այդ անձանց կյանքը, առողջությունը, պատիվը, արժանապատվությունը և ունեցվածքը պահպանելու, ինչպես նաև հանցագործներին բացահայտելու և պատասխանատվության ենթարկելու համար»<sup>3</sup>: Այդ անձանց պաշտպանությանն ուղղված գործառական նորմերի շարքին կարելի է դասել Քրեական դատավարության հիմքերի (Основы уголовного судопроизводства СССР и союзных республик) 12-րդ հոդվածը (1990 թվականի հունիսի 12-ի հրատարակությամբ), որը նախատեսում էր դռնփակ դատական նիստի հնարավորություն, և 351-րդ հոդվածը, որը նախատեսում էր հանցագործների կողմից ապօրինի ազդեցության ենթարկված տուժողի ու վկայի հեռախոսային և այլ խոսակցությունների գաղտնալսման հնարավորություն:

Իհարկե, մինչև 1990-ականները վկաները և տուժողները անձնական անվտանգության ապահովման կարիք ունեին: Այնուամենայնիվ, այդ հարցը այդքան հստակ և սուր չի դրսևորվել ո՛չ գործնականում, ո՛չ էլ գիտական գրականության մեջ: Հետազոտողներն ավելի հետաքրքրված էին դատավարության մասնակիցների պատվի ու արժանապատվության (այլ ոչ թե կյանքի, առողջության և ունեցվածքի) պաշտպանության<sup>4</sup> և սուտ մատնության դեմ պայքարի խնդիրներով<sup>5</sup>:

70-80-ական թվականների գիտական հրապարակումները առավել ուղղված էին դատավարության մասնակիցների, այդ թվում՝ վկաների պարտականությունների կատարման նկատմամբ պատրաստակամության բարձրացման հարցին: Յուրա-

<sup>1</sup> St' u Judgment of the European Court of 28 February 2006 on the merits of the application N 51277/99. Krasniki v. Czech Republic, § 64 – 86.

<sup>2</sup> St' u Alexander Yu. Epikhin, Oleg A. Zaytsev, Anshchrey V. Mishin, Timur R. Mukhametshin , Safety of participants of criminal trial and ensuring balance of interests of charge and protection, Revista San Gregorio, 2018, No.25, special edition November(94-99), ISSN: 1390-7247; eISSN: 2528-7907 pp. 95-99.

<sup>3</sup> St' u Закон СССР от 12 июня 1990 г. «О внесении изменений и дополнений в Основы уголовного судопроизводства СССР и СР» // Ведомости съезда народных депутатов СССР и ВС СССР. 1990. № 26. стр. 495.

<sup>4</sup> St' u **Белявский А.В., Придворов Н.А.** Охрана чести и достоинства личности в СССР. – М., 1971, стр.34; **Ной И.С.** Охрана чести и достоинства личности в советском уголовном праве. – Саратов, 1959. стр. 5-26, 63-78:

<sup>5</sup> St' u **Фельдблюм В.С.** Уголовная ответственность за заведомо ложное показания: Дис. канд. юрид. наук. – М., 1972, стр. 32-52; **Карнеева Л.М.** Интересы расследования и правовое положение свидетеля // Социалистическая законность. – 1974. – № 10, стр.58-60:

քանցյուր բացահայտված վկային առաջարկվում էր հարցնել, թե ինչու նա չի ներկայացել ցուցմունք տալու սեփական նախաձեռնությամբ<sup>1</sup>: Կարելի է ասել, որ վկայի պարտականությունը համարվել է պատվաբեր: Այսպես, «Քննիչի ձեռնարկում» որպես սուտ ցուցմունք տալու դեմ կանխարգելիչ միջոց խորհուրդ էր տրվում քաղաքացուն բացատրել վկայի պարտականությունները կատարելու պատվաբերությունը<sup>2</sup>: Այս առումով հետաքրքրական է նույն ձեռնարկի առաջարկությունը՝ հավաստիացնել վկային, որ իր անվտանգությունն ապահովված է:

Կարելի է համարել, որ վկայի անվտանգությունը բխում էր նաև ՀԽՍՀ Քրեական օրենսգրքի (1961թ.) 198-րդ հոդվածից, որով նախատեսված էր պատիժ վկային կամ տուժողին սուտ ցուցմունք տալուն հարկադրելու համար:

Միևնույն ժամանակ, վկայի վրա ճնշումների գործադրման փաստի առկայությունը երբեք չի ազատել նրան ցուցմունք տալու պարտականությունից: Ցուցմունք տալուց հրաժարվելու կամ դիտավորյալ սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության ենթարկելը (ՀԽՍՀ Քրեական օրենսգրքի 197-րդ հոդված), ըստ օրենքի, պետք է իրականացվի՝ անկախ ապօրինի վարքագծի դրդապատճառից: Մեղադրյալի կողմից հաշվեհարդարի վախը, ըստ Քրեական օրենսգրքի մեկնաբանների, պարզապես արդարադատության դեմ հանցագործության (դիտավորյալ սուտ ցուցմունք տալը և ցուցմունք տալուց հրաժարվելը) շարժառիթ էր և ոչ ավելին:

Հայաստանում քրեական դատավարության մասնակիցների պետական պաշտպանության և անվտանգության ինստիտուտի հիմքերը ձևավորվել են XX դարի վերջին և XXI դարի սկզբին:

Կարելի է ընդգծել, որ գիտական հետազոտություններում պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման խնդիրները հիմնականում դիտարկվում են քրեական դատավարության իրավունքի համատեքստում: Սակայն քիչ են քրեական դատավարության մասնակիցների անվտանգության պաշտպանության գործընթացում պետության և անհատի շահերի միջև հավասարակշռության հաստատման խնդրահարույց իրավիճակի ուսումնասիրություններ: Վերջին տարիներին ակտիվացել են արդարադատության իրականացման գործընթացում ներգրավված անձանց անվտանգության պետական պաշտպանության դատական միջոցների կիրառման և քննչական ու այլ դատավարական գործողություններով անվտանգության ապահովման մարտավարության ստեղծմանը ուղղված գիտական հետազոտությունները:

Քրեական դատավարությունում մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության ոլորտում օրենսդրական գործունեության որոշակի արդյունք կարելի է համարել ՀՀ Քրեական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածում տեղ գտած կարգավորումը, որի համաձայն՝ քրեական դատավարությանը մասնակցող կամ հանցագործության մասին հաղորդում տվող յուրաքանչյուր անձ, ով կարող է հաղորդել տվյալներ, որոնք նշանակություն ունեն հանցագործությունը բացահայտելու և դրա կատարողին հայտնաբերելու համար, ինչի հետևանքով կարող են վտանգվել նրա, նրա ընտանիքի անդամի, մերձավոր ազգականի կամ մերձավորի կյանքը, առողջությունը, գույքը, իրավունքներն ու օրինական շահերը, ունի պաշտպանության իրավունք:

Այս երաշխիքի շրջանակում օրենսդրությունը սահմանել է պաշտպանության մի շարք միջոցներ: Քրեադատավարական օրենսդրության համաձայն՝ անհրաժեշտության դեպքում կարող են իրականացվել մեկից ավելի պաշտպանության միջոցներ, իսկ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված կարգով և պայմաններով պաշտպանության ենթակա անձի պաշտպանությունը կարող է իրականացվել նաև օտարերկրյա պետության տարածքում:

<sup>1</sup> St`u **Томин В.Т.** Взаимодействие органов внутренних дел с населением в борьбе с преступностью. – Омск, 1975. стр. 107.

<sup>2</sup> St`u **Справочник следователя / Ред. Селиванов Н.А.** Выпуск 1. – М., 1990. – стр. 157.

Այնուամենայնիվ, պաշտպանության միջոցների կիրառման առումով գործնականում առաջանում են մի շարք խնդիրներ: Իրենց անվտանգության ապահովման մասին մտահոգություններ են ներկայացնում դատավարական տարբեր կարգավիճակ ունեցող կամ հաղորդում տվող անձինք: Հաճախ նախաքննություն իրականացնող մարմինը անհրաժեշտ դեպքում չի կայացնում պաշտպանության միջոց կիրառելու մասին որոշում և անգամ մերժում է տուժող կողմի միջնորդությունները, ինչը հանգեցնում է բացասական հետևանքների: Շատ դեպքերում քրեական գործն ըստ էության քննության նպատակով դատարան ուղարկվելու փուլում տուժողները մտավախություն ունեն, որ թեև տվյալ պահին իրենց անձնական անվտանգությունն ապահովվում է, սակայն նույնիսկ տվյալ անձանց դատապարտվելուց հետո կարող են ունենալ անվտանգության խնդիր:

Օրինակ՝ Մարդու իրավունքների պաշտպանի 2020 թվականի տարեկան հաղորդման մեջ տեղ գտած դեպքերից մեկով պարզվել է, որ Հայաստանի մարզերից մեկում նախկին ամուսնու կողմից կնոջ նկատմամբ ֆիզիկական բռնություն գործադրելու ենթադրյալ դեպքի քննության ընթացքում կնոջ նկատմամբ ձեռնարկված չի եղել պաշտպանության միջոց, որի հետևանքով մեղադրյալի և տուժողի միջև իրականացված առերեսումից հետո նախկին ամուսինը կատարել է հանրորեն վտանգավոր արարք՝ կնոջն առևանգելու ձևով:

Ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ խնդրի լուծումը տարեցտարի դառնում է առավել հրատապ: ՀՀ դատախազության տեղեկացմամբ՝ 2020 թվականին 35 քրեական գործով կիրառվել է պաշտպանության միջոց 41 անձի նկատմամբ, իսկ 2019 թվականին՝ 17 քրեական գործով՝ 23 անձի նկատմամբ: ՀՀ քննչական կոմիտեի տրամադրած տեղեկության համաձայն՝ մարդու կյանքի և առողջության, ազատության, սեփականության, հասարակական անվտանգության, կառավարման կարգի, զինվորական ծառայության կարգի դեմ ուղղված հանցագործությունների առթիվ հարուցված 18 քրեական գործերով 23 անձի նկատմամբ որոշում է կայացվել պաշտպանության միջոց ձեռնարկելու մասին<sup>1</sup>:

Քրեական դատավարության օրենսգրքով ամրագրվել է, որ պաշտպանության միջոցների իրականացման կարգն ու պայմանները սահմանվում են ՀՀ օրենսդրությամբ: Չնայած դրան՝ այս ինստիտուտի ներդրումից ի վեր պաշտպանության միջոցների իրականացման կարգը և պայմանները որևէ իրավական ակտով չէին կանոնակարգվել:

2020 թվականի սեպտեմբերի 3-ին ընդունվել է նաև «Քրեական դատավարությանը մասնակցող անձանց նկատմամբ ոստիկանության կողմից պաշտպանության միջոցների իրականացման կարգը և պայմանները, ինչպես նաև պաշտպանվող անձի և պաշտպանության միջոցի իրականացման վերաբերյալ տեղեկությունները չհրապարակելու մասին գրավոր նախազգուշացման ձևը սահմանելու մասին» Կառավարության N 1474-Ն որոշումը, որով նախատեսվել են գործող իրավակարգավորումների ընթացակարգային նորմերը:

Պաշտպանության միջոցների հարցին և դրանց կիրառման ժամանակ հանրային և մասնավոր շահերի հավասարակշռմանը անդրադարձել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը: Վերջինիս դիրքորոշմամբ՝ հանցագործության բացահայտմանը նպաստող անձանց պաշտպանությունը՝ ընդհանրապես, և պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող տվյալների պաշտպանությունը՝ մասնավորապես, հետապնդում են իրավաչափ նպատակներ և ինքնին անհամատեղելի չեն մեղադրյալի՝ արդար դատաքննությունն ապահովող իրավական արժեքների հետ, սակայն հանցագործության բացահայտմանը նպաստող անձանց պաշտպանությունը կանոնակարգող քրեադատավարական իրավանորմերը մեկնաբանելիս և դրանցով սահմանված իրավա-

<sup>1</sup> Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանի տարեկան հաղորդում 2020 թվականին Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի գործունեության, մարդու իրավունքների պաշտպանության վիճակի մասին, Երևան, 2021, էջ 473-478:

կան մեխանիզմները գործադրելիս հարկ է նկատի առնել, որ դրանք չեն կարող հանգեցնել մեղադրյալի՝ արդար դատաքննության իրավունքի չեզոքացմանը:

Վճռաբեկ դատարանը քննարկվող հարցում որդեգրել է խիստ մոտեցում: Մասնավորապես, Հ. Սահակյանի վերաբերյալ կայացրած որոշմամբ դատարանը նշել է, որ հանրային և մասնավոր իրավաչափ շահերը պետք է հավասարակշռվեն այնպես, որ մեղադրյալը չզրկվի «զենքերի հավասարության» իրավունքից և արդյունավետ պաշտպանության հնարավորությունից, ուստի որևէ ապացույց չի կարող դրվել մեղադրական դատավճռի հիմքում՝ առանց պաշտպանության կողմին ծանոթանալու հնարավորություն տալու, առանց դատաքննության ընթացքում հետազոտվելու: Այլ կերպ, ըստ Վճռաբեկ դատարանի, չբացահայտված բովանդակությամբ ապացույցի հիման վրա անձին դատապարտելու արգելքը բացարձակ բնույթ է կրում՝ անկախ ապացույցների ընդհանուր զանգվածում այդ ապացույցի դերից, իսկ այդ արգելքը խախտելն ինքնին քրեադատավարական օրենքի էական խախտում է՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 398-րդ հոդվածի իմաստով<sup>1</sup>:

Կարևոր է նշել, որ 2022 թվականին ուժի մեջ մտնող ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքում ևս սահմանված է առանձին գլուխ «Քրեական վարույթին ներգրավված անձանց հատուկ պաշտպանությունը» վերտառությամբ: Նույն գլխում քրեական դատավարության մասնակիցների պետական պաշտպանության երաշխիքը շարադրված է 73-րդ հոդվածում, ըստ որի. «Քրեական վարույթին ներգրավված անձի, ինչպես նաև նրա ընտանիքի անդամի կամ այլ մերձավոր անձի (սույն գլխում այսուհետ՝ պաշտպանվող անձ) նկատմամբ հատուկ պաշտպանության միջոց է կիրառվում, եթե վարույթի իրականացման հետ կապված նրանց կյանքին, առողջությանը կամ իրավաչափ շահերին ողջամտորեն կարող է սպառնալ իրական վտանգ»:

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի 74-րդ հոդվածում նախատեսված են հետևյալ հատուկ պաշտպանության միջոցները՝ պաշտպանվող անձին մոտենալու կամ նրա հետ շփվելու սահմանափակումը, պաշտպանվող անձի ինքնություն հաստատող տվյալների գաղտնիացումը, պաշտպանվող անձի, նրա բնակարանի և գույքի նկատմամբ հսկողությունը, պաշտպանվող անձին անհատական պաշտպանության միջոցի տրամադրումը, պաշտպանվող անձին բնակության այլ վայր փոխադրումը, պաշտպանվող անձի ինքնությունը հաստատող փաստաթղթերի փոխարինումը կամ պաշտպանվող անձի արտաքինի փոփոխումը, պաշտպանվող անձի աշխատանքի, ծառայության կամ ուսման վայրի փոխումը, դատական նիստերի դահլիճից հեռացումը կամ դռնփակ դատական նիստի անցկացումը և դատարանում պաշտպանվող անձի հարցաքննությունը հատուկ կարգով:

Օրենսգրքի նույն գլխում նախատեսված են նաև պաշտպանվող անձի իրավունքները և պարտականությունները, հատուկ պաշտպանության միջոցների կիրառման կամ դադարեցման հիմքերը և կարգը: Քրեական դատավարության նոր օրենսգրքի դրույթները լուծում են տալիս մի շարք գործնական խնդիրների և համապատասխանեցված են քրեական դատավարության ոլորտում իրականացված այլ բարեփոխումներին: Միևնույն ժամանակ նոր օրենսգրքի 8-րդ գլխում շարադրված դրույթները ևս պարունակում են քննարկման տեղիք տվող մի շարք ձևակերպումներ, որոնց վերաբերյալ վերջնական դիրքորոշում հնարավոր կլինի հայտնել միայն օրենսգիրքը ուժի մեջ մտնելուց հետո:

Կարևոր ենք համարում նշել նաև, որ հանցավոր ազդեցության սպառնալիքի ժամանակին հայտնաբերումն ու չեզոքացումը ծառայում են որպես քրեական դատավարության մասնակիցների լավագույն պաշպանության և ընդհանրապես հանցավորության դեմ պայքարի արդյունավետ միջոց: Այս առումով գործնականում կարևոր է մշակել նաև քրեական դատավարության մասնակիցների վրա ապօրինի

<sup>1</sup>Տե՛ս նույն տեղում:

ազդեցության քրեաիրավական բնութագիրը: Քննիչի, դատախազի, դատավորի կողմից նման բնութագրերի առանձին տարրերի մասին տեղեկատվության տիրապետումը հնարավորություն է տալիս հայտնաբերել նման ազդեցություն իրականացնող անձանց գործունեությունը և համապատասխան միջոցներ ձեռնարկել այն ժամանակին չեզոքացնելու համար:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ քրեական դատավարությունում անձի պաշտպանության ինստիտուտի գիտական զարգացման ներկա վիճակը թույլ է տալիս եզրակացություն անել, որ անհրաժեշտ է ընդլայնել միջճյուղային համագործակցությունը և հետազոտությունները՝ մեղադրանքի և պաշտպանության կողմերի շահերի հավաքման հիման վրա:

## СТАНОВЛЕНИЕ И РАЗВИТИЕ ПРАВОВОГО ИНСТИТУТА ГОСУДАРСТВЕННОЙ ЗАЩИТЫ УЧАСТНИКОВ УГОЛОВНОГО СУДОПРОИЗВОДСТВА

Седа Степанян

*Аспирант кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ*

Статья посвящена рассмотрению вопросов становления и развития института защиты участников уголовного судопроизводства, обеспечения безопасности лиц, подлежащих государственной защите, как в европейских странах, так и на территории бывшего СССР. В статье так же обсуждается развитие института защиты участников уголовного судопроизводства в Армении и его роль на современном этапе развития.

## FORMATION AND DEVELOPMENT OF THE LEGAL INSTITUTION FOR STATE PROTECTION OF PARTICIPANTS IN CRIMINAL PROCEEDINGS

Seda Stepanyan

*PhD Student at the YSU Chair of Criminal Proceedings and Criminalistics*

*Annotation:* The article is dedicated to the consideration of the issues of the formation and development of the institution of participant protection in criminal proceedings, ensuring the security of persons subject to state protection, both in European states and on the territory of the former USSR states. The article also discusses the development of the institution of protection of participants in criminal proceedings in Armenia and its role at the current state.

**Բանալի բառեր** - քրեական դատավարություն, դատավարության մասնակիցների պետական պաշտպանություն, անվտանգություն, հատուկ պաշտպանության միջոցներ, հանցագործությունից տուժած անձ, հանրային շահ, մասնավոր շահ

**Ключевые слова:** уголовное производство, безопасность, государственная защита участников процесса, специальные меры защиты, жертва преступления, общественный интерес, частный интерес

**Key words:** criminal proceedings, safety, public/ state protection, special protection measures, crime victim, public interest, private interest